Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4168

301
U-84

2010

Ивиковъ Григорий

301
ШУ-84

ԱՐԵՎՈՒԵՎԸ

13391-ԱԿՀ

ՕԵԿՈՒՅՈՒՄ

Մեզանում առայժմ փեղմաց կին մէջ արգիլված ըլլալուն համար՝ Մեջուխեջեան կը զբաղի ինքնին ահա Մեզանում տեսնել վարդաքաղներում։

Յ. Գ. ՍԱՎԱՃԵԱՆ

2001

6185
41

ԱՆՀՈՒԽԵՑԱՆ

ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Մեն մարդ քիչ շատ այս անձին վրայ խօսեցաւ. բայց անանկ կը կարծենք որ ոչ ոք կրցաւ ճշդիւ նկարագրել անոր հոգուն կատարելութիւնները։ Այսօր փորձ մըն ալ մենք կ'ընենք։

Այս անձը, Երուսաղէմի Հանգուցեալ Պատրիարքին — անարատակոյս Հանգուցեալ — փոխանորդը բարի մարդ մըն է. և եթէ կատարեալ քրիստոնեայ մը չէ՝ պատճառը սա է որ օձի պէս խրամանկ չէ. աղաւնիի պէս միամիտ երեւնալը իրեն բաւական համարեր է. սակայն Գուամ-գաբուլ Թաղական խորհուրդը, Պէշիկթաշի, Գուզկունճուքի, Սէլամլըղի և այլն վեղար ունենալ չունեցող թէ չունեցող վարդապետներն ու տէրտէրները կը վկայեն՝

ձեռքերնին կուրծքերնուն դնելով . . . որպէս զի մարտղութիւնին չը խանդարի ։

Սահակ վարդապետը մի միայն Պոլսեցոց ծանօթ չէր . — Պոլսեցիք ամ ճանչած են . — չէ նէ Հնդկաստանէն մինչև Ամերիկա , Բեթերսպուրկեն մինչև Սենեկամպիա՝ ամեն մարդ զինքը կը ճանչեն . ճիտէի մէջ մէկ քանի օր կեցած է , Եգիպտոսին բարև մը տուած անցած է . բայց մինչև այսօր այն տեղի ճշմարիտ հաւատացեալները անոր յիշատակը մոռցած չեն . ամեն մարդ անոր անունը բերնէն չը ձգեր . — մէկ մը վար ձգէ նէ ուր ինալիքը գիտնալով . — ամեն մարդ անոր մեծագործութեան վրայ կը հիանայ , գիշերը երազը տեսնէ նէ կը տակայ ։ Ամենք ալ "Երուսաղէմի վանքին դիւանատունը տակաւին վկայ է , կը պօռան , վկայ" ։

— Մի՛ աճապարէք ծո՛ , առանց ալ առեղը կայ — ։

Սահակ վարդապետ միայն գէորգ Պատրիարքին չը կրցաւ ինքզինքը սիրցընել . առեն մըն ալ Գում-Գապուի

աւագերէցը վռնտեց՝ Երուսաղէմայ տանը դուռը անոր քիլիմին զարնելով. բայց եռքը անոր կարողութիւնը ճանչեց ու սանդուխքին վարի ոտքէն դիմաւորեց իր հեզութեան ու ցածութեան նշան։ Այսօրերս ալ Եկեղեցականաց ամբարիշտ մասին անհաճոյ է. զաւ։ Դէորգին յաջորդը իր նախորդին չինմանելու համար անոր բարեկամներուն թշնամի և թշնամիներուն բարեկամ ըլլալով՝ Սահակ վարդապետին մեծ բարեկամութիւն ցոյց։ առանց անոր՝ կերած հացը չը կրնալ մարսելուն, սեղանին տակը իր մօտը կ'առնէր միշտ. և երբոր ատեն մ'ալ Պատրիարքարանի և Երուսաղէմայ տանը մէջ իրար տեսնելն անկարելի եղաւ՝ ուրիշ սեղ գիշերները իրար կը տեսնէին սատնք, ու տանը պարտէզին վրայ նայող սենեակը նստած, — Թերևս փողոցէն անցնողները չը լսեն տէր — բաժակ 'ի ձեռին՝ Հանդստեան Շարականն կ'երգէին ու Երուսաղէմի նոր ընտրեալ Պատրիարքին կենացը Խօսք կ'ընէին։

Սարգիս Սահակը սիրելու գլխաւոր պատճառ մ՚ալ ունէր, որ սա էր։ Երկուքն ալ մի և նոյն բնութեան տէր էին. երկուքն ալ խոնարհ, երկուքն ալ հաստատամիտ՝ . . . իրենց շահաւոր գործին համար։ Երկուքն ալ անձնուէր. ուխտերնին կատարելու համար՝ գլուխնին կուտային. — այսինքն մեծերնին — երկուքն ալ ազգասէր. երկուքն ալ "ազգ իմ աչք իմ, կ՚ըսէին. ազգերնիս երթայ նէ՝ աչքերնիս չրկուրնայ կ՚ըսէին — որ տեսնեն"։ Երկուքն ալ մէկ հաստակ, երկուքն ալ մէկ մօրքուկ ունած մէկ մօրքուկ դատարակուած մէկ վերարի տակ ծածկուած և մօրուքով մը փառաւորված. երկուքն ալ ազգին թշուառութեան տաղտուկ ու զգեցած. ներսերնին դուրսերնին մէկ. — Թող հասկընան ուզող արտով։ Աւելցու՝ ատոնց վրայ նաև երկուքն ալ երբեմն մէկ անունով յորջորջված։ Սահակին արջի անունը Սարգիս էր և այս անունով եղած տեղը տեսնելի մեծագործութիւններ ըրած էր։ Պատրիարքն ալ ամենէն եւեալ այս բանին հա-

մար զինքը կըսիրէ։

Սահակ վարդապետ շատ ալ առաստաձեռն է. աղքատ մը չ'էինք լսած Պատրիարքին կենդանութեանը, որ օր մը Երուսաղէմայ տանը դուռը զարկած ըլլայ ու հացագին մը չ'առած ետ դառնայ։ Իսկ Պատրիարքը մեռնելէն 'ի վեր մանաւանդ երկու երեք ամիսէ 'ի վեր մուրացկան մը չ'եղաւ, որ աստր տունէն ելածին պէս Երուսաղէմի ազատութեան վազող անշահախնդիր կամաւոր զօրքի փաղանգին համար իր անունը արձանագրել չըսայ։ Կըսեմք որ մեծերս հրեայներէն ալ շատերը Քրիստոսի գերեզմանը անհաւատներուն ձեռքէն ազատելու համար զէնք առնող Հայերուն քով պիտի վազեն՝ Սահակ վարդապետին էնդարիէն դրօշակին տակը. վասն զի "ուր որ ոսկի կայ, կ'ըսէ Մօնթէսքիէօ, հոն անկասկածելի է որ հրեայ չ'ըլլայ"։

Բանի մըն ալ անշահասէր թղթատարներ վարձեր է Սահակ վարդապետ՝ օրուան կարգը (ordre de jonr) իր բանակին մէջ անմիջապէս տարածել տալու

և իր կողմին ամեն պարտութիւնը թշնամեաց բանակին մէջ երբև մեծ յաղթութիւն հռչակելու համար։ Սահակ վարդապետ հիւրասէր ալ է. բանտերուն մէջ, ջաղացքներուն մէջ, քաղաքներուն մէջ, պանդոկներուն մէջ մարդ ջրթողուր՝ կը հրաւիրէ, կը մեծարէ, կը կերցնէ կը խմցնէ. կը կերցնէ, կը կերցնէ, չ'եկողին ալ եռանէն ուտելիք կը ղրկէ։ Գարնան՝ իր ընկերները Ալէմ տաղն կը ղրկէ։ Ամառը՝ իր փոքրաւորները ծովը կը խօթէ։ Աշնան՝ մէջը պատրաստ ու սեցած տանց կը ղրկէ իր տունը չ'եկող մեծերուն։ Ձմեռը՝ անուշ ուկակուզ հէլվա սէօհպէրի կ'ընէ՝ մէկ կողը մէն ալ կրակին մէջ ջրձեղքած շապանակ նետելով։ Երուսաղէմի Յակոբեանց միաբանութենէն փախստական վարդապետներ կը ժողվէ իր թեւերուն ներքև. ինք հաց չրկերած անոնց կերակուր տալ կուտայ. իր քերնին ոտառը անոնց բերանը կը դնէ . . . որպէս զի բոլոր միաբաններուն փոխաքած լման հացը ինք լպէ։

Սահակ վարդապետ աւետարանին

բուն հոգին ալ՝ ամեն Հայ եկեղեցական կանանցէն առաջ և լաւ հասկցող անձն մըն է. եղբայրութիւնք և հաւատարութիւնը շատ կը պարծէ. անցած տարի Պատրիարքարան դիմող Հանցիներն ու Քիւրտերը վռնտելու մի նայիք դուք. տեսէք հիմայ ինչպէս կը պարծէ. եկողին իր դուռը բաց է. մեծ պզտիկ ընդանէր. ամենուն ալ կարօտ է, ամենուն ալ սէր և յարգանք կը ցուցնէ. ամենն ալ-քովը կ'առնէ կընտի. ամենուն ալ սրտցաւութիւն կը ցուցնէ — երբ իրեն սրտակից ըլլան — ամենուն առջև ալ ազգին արդի թշուառութեան վրայ կ'ողբայ — կամք ըրած ատեն աչքէն արտասուք հանելու յատկութիւնն ալ ունի կ'ըսեն —. անցած օր իրեն տունը նորոգութեան համար տարված ԸՆԴԷՖԷՃ ՄԷՆԱԽԷՄը կը պատմէր մէկուն ու ուղիղ սքատէ կ'ըսէր թէ "շիտակը ես ալ իրեն չատ խաւարեալ պիտի ըլլայի՝ թէ որ իմ ձերմակ թիլիթեղիս վոխանակ ինձի դեղնէն տար"։

Սահակ վարդապետ Քրիստոսեան

բանակին քաջ զօրապետներէն ալ մէկն է. քանի քանի անգամ անհաւատնեալ դէմ պատերազմած ու իր կողմին յաղթութիւնը իր արիւնովը վաստակած է։ Շրուսաղէմի պաշարման առեն՝ ասկաւաթիւ անձերով քաղաքէն դուրս յարձակեցաւ, բոլոր իր մարդիկը մահացան՝ ինքը սուիններուն մէջ պաշարուեցաւ, ոսան ու ջորս վէրք առնելէն ետքը գերի ընկաւ ու յաղթութիւնը վաստակեցաւ. ջհաւատացողները թող երթան իր վէրքերուն սպիները տեսնեն. իսկ եթէ իր ազգական համեստութեամբն իրեն փառքն ու արժանաւորութիւնը աւելցնող այդ շքանշանները ջը ցուցնէ՝ թող քաղաքական ու Կրօնական ժողովի անդամներուն հարցընեն. — անցածներս անոնց եցուց և համբել տալ ուզեց։

Այս կենդանի նահատակը, որ հոգու փրկութեան համար մարդասպան ըլլալու չափ անձնուէր ըլլալը իր վէրքերով կը հաստատէ՝ երկիւղած, խաղաղասէր և ճշմարիտ հաւատացեալ ալ է։ Աստ ամենեին տարակոյս չը

կայ. կենդանի և անլուռ — կարդայ անլուր — վկայներ են իրեն համար իր գործերը վերջին օրերուս մէջ. և եթէ ասոնց ալ թերահաւատ եղողներ կան՝ կրնան Յակոբ պատրիարքի նման ծերուն և "մէկ ոտքս չուխտուռն է ես սուտ չեմ ըսեր" պօռացող արքեպիսկոպոսի մը հարցընել. իսկ եթէ կաթուածահար անձին վկայութիւնը ըստ վկայութեան բժիշկներուն և տաճկական օրէնքին անընդունելի ըլլալով, անոր խօսքին հաւատալ կարելի չ'է՝ կրնայ Սահակ վարդապետը քիչ օրուան մէջ կաթողիկոսէն ալ վկայական բերել տալ։ Վասն իրեն . . . յատկութիւնը . . . . այսինքն իր կատարելութիւններովը յաւուկ ըլլալուն համար։

Հուսկ յետոյ մեծ անիրաւութիւն մ'ըրած չ'ըլլալու համար պէտք է նաև խոստովանինք թէ Սահակ վարդապետ՝ այս ժամանակին համար ոգէտ մարդ ալ չ'է։ Շատ բան կարդացած է. շատ անգամ առջի իրիկուընէ մինչև առաւաւ աչքի լոյս թափած է երկար հլուկուններու մէջ. Երուսաղէմի վանքը

արկաւագուլթեանն առեն ամեն լը-
կուն Յայտաւուլքն ինք կը կարդար.
վանքին տպարանէն ելած ամեն գոլա-
սանքի տետրակները ծայրէ ծայր գոց
դիտէ. անցածներս գիշերները մինչև
լոյս ճրագը ձեռքը, մօրուքը բռնկած
Հաննէ վարդապետին պատմութեան
լուծմունքը կ'ընէր. և ի՞նչպէս ապէտ
կրնայ ըլլալ։ Իրաւ անցած տարի դեկ-
տեմբերի մէջ Եկեղեցու բանադրանքին
«ինչ ածականը շատ յարմար կը թուէր
իրեն՝ [1] բայց անկէ մինչև հիմայ մեծ
փոփոխութիւն եղած է իր վրայ։

---

1 Անցած տարի Մեղուն հրատարակեր էր թէ նոյն առենի Կրօնական ժողովն Գօղաս վարդապետը ոչ աք չ'է եկեղեցական ճանչել, և թէ այդ անձը Եկեղեցական վարչութեան օրինաց համեմատ ինքնին կարգէն լուծված էր։ Ըստ վրայ քահանայներ. վարդապետներ եպիսկոպոսներ և պատրիարք փոխնակով որ օր մ'ալ Մեղուն զիրենք կը լուծէ՝ (որչափ ալ անարիւս եղեր է Մեղուն այդ մարդոց) մէկ քանի աշխարհականներու յորդորանքն ալ ընդունելով՝ եկան Կրօնական համագումար ժողով մը ըրին Մեղուն բանադրելու վճիռ տալու կամ վճիռ առնելու համար։ Հոն եպիսկոպոս մը կամ կաթուղիկոս կամ զանի փորձել ուզելով կ'ելնէ ասոնց կը գրէ թուղթի մը վրայ. "Մեղուն Եկեղեցւոյ ոչինչ շանթերը ապահամարհելուն համար դատապարտեալ է"։ այս թուղթը Սահակ վարդապետին կը ցուցնէ, որ շուտ մը "շատ աղէկ, ահա այս թուղթը ստորագրենք" կ'ըսէ։

Հիմայ ակնաւոր ու ակնոցաւոր պատուելիներ օրն 'ի բուն ու գիշերն 'ի բուն զինքը առած նստած են. ճարտասանութիւն ու տրամաբանութիւն դաս չ'առած դաս տուող վարդապետներ ու քահանայներ իրեն խրատատու են։ Եթէ ասոնց մէկն ալ խեր մը չ'ունի իրեն՝ գոնէ իր անունովն ու իր հրամանով տրված յայտարարութիւնները, յաւելուածները, և անդիէն ստդիէն իրեն ուղղված նամակներն ալ չը կարդար։ Ասոնք մոռացելով՝ չ'էնք կրնար ըսել թէ Սահակ վարդապետ կարդացող չ'է։ — չ'է ըսողները թող վերզարին նային գոնէ։ Տաճիկն անգամ տեսածին պէս օգուտմուշ (կարդացող) կը կոչէ։

Կը յուսանք թէ մինչև հիմայ ըսվածներէն ընթերցողք քիչ շատ ճանչեցին մարդը. ասկէ ետքն ալ քիչ մը անոր գործերը տեսնենք։

ՄԱՅԻՍ 5

Սահակ վարդապետ՝ Խառն ժողովին առջև։

— Հայր սուրբ. ձեր քրիստոսաղօր

Սուրբ աջոյն ամենայն խոնարհութեամբ և ամենայն անարժանութեամբ երկիր-պագանելով, և երկնաձեմ սուրբ գարշապարացդ 'ի համբոյր խորին ակնածութեամբ մատչելով կը համարձակիմք, մեղայ, ինչ կ'ըսենք կը յանդգնինք ձեր Ամենավեմապատուութեան յայտնելու, թէ ձեր սուրբ Միաբանութիւնը քուէարկութիւնը օրինաւոր կերպով ըրած, և Կանոնադրութիւնը ստորագրած չ'ըլլալուն՝ այնպէս որոշեցինք որ Հիւնքեարպէյէնեան քահանան Ս. Երուսաղէմ երթայ ու հոն այս գործերը կարգի դնէ. ինչ հրաման կ'ընէ ձեր խորհուրդն ու երկնաւոր պատգամախօսութիւնը —։

(Սահակ վարդապետին գոյնը կը նեփէ, յեռոյը ոտոյը կը դողայ ու փենդէ բռնըվածի պէս ցնցըվելով կը պօռայ)։

—Ի՞նչ կ'ընէք, աղանե՛ր, հայրե՛ր, եղբայրնե՛ր, խելքերնիդ գլուխնիդ ժողվեցէք. Երուսաղէմի վանքը ձեռքերնուդ պիտի երթայ... այսինքն քանի մը հոգիի ձեռք պիտի անցնի, — աղկը ըռէզկ'ելելիք —։

(Ֆենդը ահռելի բռնված իսկոյն ծունկի վրայ կը լուրին ու գլուխնին բանալով, կ'ըսէն)։

— Այր սուրբ, մեղայ. բայց մէյմը մտածել թող բարեհաճի ձեր բարձրահասակ և կանգնաչափելի միտքը։

— Ի՞նչ պիտի մտածեմ. ես ձեզի չափ մտածեր եմ. ձեր խելքը Երուսաղէմին չը հասնիր. — այնչափ երկան չէ —։

(Ֆենդն ալ ելան պեղերնին նոպան ու ոչը ոտը երկնցնելով, ոչը ոտը ոտին վրայ դնելով ըսին)։

— Այր սուրբ, ի՞նչ կ'ըլլայ ասկէ հոն մարդ մը երթայ նէ. գացողը քահանայ է. վարդապետ կամ եպիսկոպոս չ'է որ քու տեղդ Պատրիարք ըլլալու աշխատի։

— Չ'է, չ'ըլլար. հոն դուրսէն մարդ երթալ չ'ըլլար։

— Այ. հասկցանք. (Պատրիարքը) ալ դուրս ել. չ'ես ամչնար։

— Շատ աղէկ. ես դուրս կ'ելլամ .... (Իսմայիլը) բայց դուն ալ Պատրիարքարանին մէջը չ'ես մնար. քեզ ալ դուրս կը հանեմ։ Ինքզինքս քեզի կը հասկցընեմ ես։ Հէ, հէ։

(Գնորգ Պապրիարքը և որոշ մեկ չանք աշխարհականներ դուրս կ'ելնեն եպեսքեն ղբիչը հանդարտեցնելու համար)։

— Պէ՛ ճանըմ հայր սուրբ. ինչո՞ւ կը գարկանաս. մեղքը չէ՞ քեզի. կ'ելնէ արիւնդ կը դառնայ ու կը հիւանդնաս և թերևս Պատրիարք ըլլալու ալ չ'ես հասնիր։

— Ի՞նչ. Պատրիարք ըլլալ. ես ինծի համար չ'եմ խօսիր Սրբազան. Ամենասուրբ Երրորդութիւն մըկայ, քառասուրբ կարգդ մըկայ՝ ես պատրիարք չ'եմ ըլլար. թէև բոլոր Մխիթարեանները ուզէ, թէև բոլոր Ազգս ուզէ, թէև Հնդկաստանցի Թագուհի տիկինը ուզէ, թէև Անգլիացի օֆիցիալներուն խնդրանքը վերհասիտ Թագուհին ուզէ, թէև հանգուցեալ Կիրակոս պատրիարքը երկինքէն պօռայ. դա՛ է որդի իմ սիրելի՝ դմա լուարուք։

— Չ'է ճանըմ. ինչո՞ւ չպիտի ըլլաս. ազգը քեզնէ կարողն ու արժանաւորը պիտի գտնէ . . . իր վանքը կործանել ուզած ատեն։

— Պէ՛ ճանըմ հայր սուրբ, Աստ-

ուածդ կը սիրես հանդարտ բռնէ սիրտը. տէր ողորմեա, ի՞նչ եղար, սա նայէ՛, գոյնդ անանկ փոխվեցաւ, որ հազիւ քեզ մարդ կը կարծեն։

— Հայոյէ, հայոյէ, ասունդ գնա, հանդարտէ՛ քիչ մը. տէր ողորմեա. իւրաւ որ ես քենէ չ'էլ յուսար։

— Դեռ ի՞նչ տեսար. ահա ես կ'երթամ, բայց եռքը չի զգլաք —։

ՄԱՅԻՍ 11

Սահակ վարդապետ՝ անկողնէն նոր ելած։

— Յակոբ, Յակոբ. ել, ել։

— Բրրր

— Հէ՛. ի՞նչ կայ. փախան Հռոմ-նները. անիծից արմատները. ծո՛. սա վեղարիս կարկտան մ՚ալ զարկէք.

— Պէ՛ Յակո՛բ. ի՞նչէր կ՚ըսես, խեն-դեցա՞ր. ո՞ւր են Հռոմները, ի՞նչ կան-դեղ է ադ։

— Ի՞նչ կ՚ըսես վարդապե՛տ. տէհա դէմդ կեցեր է՝ Հուն՝ը, ուրա ինտո՞ր կը խընդայ. տէ առ քեզի մեկ բիր մ՚ալ։ վայ մէջքս. ո՛ւհ մարա՛։

(Ընդոշնին վրայ՝ կը պարծվի։)

— Ով Տէր Աստուած. ինչ ընեմ հիմայ. այս խեն-դը ի՞նչպէս եռուէն ղըրկեմ. ծո՛ Յակոբ վարդապետ, էլ արթընցիր։

— Հէ՛հ. ի՞նչ կայ հայր սո՛ւրբ. կոչնակը զարնըվեցա՞ւ. է՛հ. ծո՛ տղաք ելէք. (վեղարը գլուխը դնելով — վազելով)

Տէր. զի բազում եղեն նեղիչք իմ. և, նզովեալ բիրէներ... բազումք յարեան 'ի վերայ իմ։ ...

— Յակո՛բ. օրհնեալ քեզերուքը ըսե տէ լմնցո՛ւ. հիմայ ժամասացութեան առեն չ՚է. էլ էլ. ժամերը ժամէն ելաւ։

— Ի՞նչ կայ հայր սուրբ. կերակուրի ժամանակ է։

Չ'է եղբայր, չ'է օրհնեալ, չ'է. խելքդ գլուխդ ժողվէ որ ըսելիքս լաւ հասկընաս։

— Ի՞նչ է հայր սուրբ. պատրաստ եմ ի՞նչ կ'ուզես նէ ըսէ.

— Յակոբ Յակոբ. Խառանի մէջ կըլլին եօթ տարի Լաբանին ծառայու. Թիւններուդ փոխարէն ստացած Լիա և Ռաքէլ կիներդ ձեռքէդ կ'առնենք։

— Հէ՛, ո՞վ է այդ. ծա՛. սոփանները..

— Պէ կայնէ սօփայի առեն չ'է. կեցիր որ հասկընաս։ Ձե՞ռ գիտեր որ Հիւնքեարը–պէյէնտեանը Երուսաղէմ կ'երթայ կոր։

— Ի՞նչ դարպաս պիտի տայ, հայր սուրբ. աղէկ չ'ըլլա՞ր որ հոս առնենք դարպասը։

Պէ չ'է՛. ուխտի չ'երթար կոր ան. Ազգային Վարչութիւնը կը ղրկէ կոր. մեր գլխուն փորձանք կ'երթայ կոր. Եր-ուսաղէմի վանքը տակնու

Ի՞նչ. էհ. իր կեանքին ծարաւէր է այդ մարդը. խելք չ'ունի՞ չըմտածէր որ անիկայ ողջ չ'են թողուր մեր օրհնեալ եղբայրները։

Պէ չ'է՛. բանն անոր վրայ չ'է. հիւանդքեար—պէյէնտեանը երթալու է, առողջ ալ գալու է. բայց բան մըն ալ ընել չըկրնալու է։

— Այ ինտո՞ր ընենք։

— Ի՞նչ պիտի ընենք. շուտ ըրէ ել հագվէ ու նաւ մտիր եռեւէն գնա. ճամբան թող մի՛ տար որ մարդու հետ տեսնըվի. հոն հասնի նէ երբէք մի՛ նակ մի՛ թողուր. ան խնջէ նէ դուն խնջէ. ան ննջէ նէ դուն յօրանջէ. ա՜նոր խօսքովը ամենևին գործ մի՛ կատարէք. ամեն արհամարհանք ամեն անարգանք ըրէք. բայց պատուոյն մի՛ դպչիք. վերջապէս անանկ ըրէք որ եօթը սերունդին կատակ ընէ Երուսաղէմ չ'երթալ. ձե՛զ տեսնեմ. միսը ձեզի ոսկորը ազգին. վերջապէս այնպէս ըրէք սատանէրը, որ իր վատահութիւնը գըրաւող բժիշկներուն ամենն ալ ամչնան.

. . . . օգափոխութիւնը մարդս կը

գիրցնէ ըսողներուն եւ դարձած աւեանը ոակորներու դոպրակ մը ներկայացնեմ։

— Շատ աղէկ հայր սուրբ. դուն անհոգ եղիր. մենք քու հրամաններդ եւեր եւեր օք կը կատարենք։ Ուրեմն ճնաս բարով. . . .

— Կեցի . . . . վրադ փարա կայ։

Ա՛յ. ուր է, երեկ տաս փարա տըւիր ա՛. երկու անգամ Ղալաթիա գացի ճինա—օղլուն գտնելու, վրաս ստակ չը ճնաց։ Աղէկ ըսիր հայր սուրբ. Ատուած քեզի մեզի պատրիարք ընէ ինչ ըսեմ։

— Կեցի ուրիշ ըսելիքներ ալ ունիմ. ուր է տա ինք աշխարհական է ու տէրտէրի խալաթս կը դնէ, մեր Ճապի Օհաննէսը կայ. ան ալ հետդ պիտի գըրկեմ։

— Շատ աղէկ հայր սուրբ. աղէկ մտմտացեր ես. կ՚ըսեն որ անոր ա—խաղ—Ի—ն շատ աղէկ է. հէհ ինք ալ վարպետ է հա։ Անցած օր ալ այնչափ աշխատեցաւ . . . . տեսնելու էիր։

— Հիմայ պատրաստ եմ։

— Հապա հապա՛. կնիկս զաւկը-ներս եռևէս չ'են լար կոր ա՛. մենք վարդապետ ինչո՞ւ եղեր ենք. հիմայ ճամբայ կ'ելնեմ՝ ահա. մի մախաղ, մի կոշիկ, մի ցուպ . . . . բայց սատանկ։

— Ձեռքդ բաց որ համբեմ. երկուք, չորս, վեց . . .

— Հայր սուրբ, քու ոսկիներդ կըլլին արժէք ունին.

— Ա՛հ, բարի նպատակիս հասնելու համար ոսկին իմ քովս ամենևին արժէք չունի. Աստուած Հայոց ազգը պակաս չ'ընէ. բայց այս օրերս շատ նեղութեան մէջ եմ, ի՞նչ ընեմ, խնայելով պիտի գործածեմ. իսկ յետո նեղութեան աւուրցս այսոցիկ՝ պիտի տեսնէք թէ ի՞նչ առատաձեռն եմ։ Ա՛հ անիրա՛ւ Հայոց ազգ . . . .

— Ո՛չմարիտ է Հայր սուրբ. ճըշմարիտ է. մեզի պէս մարդոց յարդը չը ճանչեր հէ՞. դուն ձեռքիս մէջը դիր, ես կը համբեմ կոր։

— Լա՛յ, հերիք չ'եղա՞ւ.

— Լա՛հ, դուն գիտես. բայց կոշիկ-ներս շատ հին է, վախնամ որ իս ճամ-

քան թողուն, ու տէրտէրին եռանէն չը հասնիմ. անոր համար նոր կոշիկ մ'ալ առնելու եմ։

— Ա՛ռ քեզի ոսկի մըն ալ. ուրիշ ընելիք մը ունիս.

— Ա՛յ։ մնաս բարով, ահա կ'երթամ կոր.

— Տէր ընդ քեզ. իսկ նայէ՛ Յակոբ վարդապետ, Պատրիարքարանին առջեւէն չ'անցնիս հա՜.

— Չ'է Հայր սուրբ, Հիսար–փըղիէն կ'երթամ. մենք Տաճկընեռուն մէջ աւելի ապահով ենք քան թէ մեր Հայերուն մէջ։

— Վա՛ղէ, վաղէ շոգենաւը չը փախցընե՞ս։

— Չ'է Հայր սուրբ չեմ փախցըներ . . . . բայց այսչափ ոսկին մէկտեղ առնելէս ետքը ի՞նչպէս չ'եմ փախցըներ։

Ո՛ւրդն օրը ծամ մը եղաւ էր սենեակին մէջ։

Ամէ՜ն աչուէ, ամէ՜ն պէխէրով մարդ մը կոտգայ ու պըրաց ըռաղը մը կոտպայ անոր։

— Ա՜ռ Հայր սուրբ. էհ սա քրտինքս նայէ . . . ։

— Ասուած քեզ պարզեւեցնէ ճիշ-
նած. մինչ սա անպիտանութիւն ձեռ-
քէն քաշածնիս, հոգ մ՚ըներ կը մտա-
նանք օր մը. էմէք օրմայրնաս եւ էմէք
օրմազ. միւնչեւ որ չ՚աշխատինք, չենք
վայելեր։

— Նա ալ կիսիմ էտանկ ըլլելը. ամա
մէկ օրուան մէջ ալ այսչափ ստորագ-
բութիւն հաւաքել ու պէտք եղած ժա-
մուն ալ ժամելը լաւիկ չ՚ըլլիր։

— Գիտեմ սիրելիս գիտեմ. բայց
հոգ մ՚ըներ. ձուկը չը գիտցայ նէ լա-
ւեղծողը գիտէ կ՚ըսեն. բայց ես կ՚ը-
սեմ քեզի արարիչը չը գիտցայ նէ՝ ես
կը գիտնամ քու երախտիքդ ու անոր
համար մեծ վարձքալ մը շնորհակալ
կ՚ըլլամ քեզնէ։

— Նա՛. էհ. նայինք. ամա էտանկ
ատոլներ շատ եղան, ամա էտես իս
մոռցան, երբոր, էֆէնտիմէ սէյլէ-
լիմ, երբոր իրենք իրենց մոռցուին
հասան։

— Միթէ եղբայր ես անուղղանալ
էմ. բայց աման ժամանակ չ՚անցուցած
սա թուղթը եսեւնուն հացընենք.

ահա ասում թող իմանայ Երուսաղէմի միաբանութիւնը թէ Հիւնքեարպէյէն տեսանին հան գնալը Ազգիս կամքովը չէ։

(Թոռ-ը բառնալով ու պորտագրոռ-ի ետանը նայելով)։

Ը՛է հէ՛ հէ՛. ահա Հայոց ազգը սա թուղթին մէջն է. ահա մենք վարդապետաց ազգը այսպէս կը պլլենք կը պըլլենք ճէպէրնէս կը խօթենք։ Թող դարձեալ մեր զօրութիւնը ճանչել չ'ուզեն. հը՛, (հեգնական կերպով) քանի որ մենք կանք՝ ազգը ինքզինքին տէրը չը կրնար ըլլալ ամենեւին. մենք ենք անոր տէրը, որ ուզենք նէ արքայութիւն կը զրկենք, ուզենք նէ դժոզք. ուզած տեսնենս մեզի համար արիւնին թափել կուտանք... ա՜հ, դուն հոս ես եղեր... էյ հոգ չ'է, դուն մեր մըտերիմն ես. անոր համար ես քու քովդ այսպէս կը խօսիմ։

— Հոգ չ'է հայր սուրբ, հոգ չ'է. ես լաւ կիմանամ որ դուք հէր ինչ որ անէք էֆէնտիմէ սէոյլէրիմ, մեր հոգուն փրկութեան համար կ'անէք։

— Հապա՛ օրհնած հապա՛, մենք այս

աշխարհիս հետ ի՞նչ բան ունինք՝ թէ որ այս ժողովուրդին փրկութիւնը մեզի յանձնուած չ՚ըլլայ . . . բայց ժամանակ չը կորսնցընենք . հա՛ իս նայէ ասի զրկելու է . այս թուղթը , որ կը պատուէրէ միաբանութեան այսչափ հաղար ստորագրութեամբ . . . ։

— Հաղարի մ՚ելլար հա՛յր սուրբ ։

— Այսչափ հարիւր ստորագրութեամբ , — հարիւր պակաս , հաղար եւ ել՝ հոգ չ՚է օրհնած — . Հիւնքեարպէյէնտեանին խօսքը մոռիկ չ՚քնել՝ պիտի ազատէ Երուսաղէմի վանքը շատմը յափշտակիչ գողերու ձեռքէն . . . պիտի ապահովէ ապագան . . . այո՛, պիտի ապահովէ . . . իմ պատրիարքութիւնս ։

— Լա՛ւ , ալ ես երթամ հա՛յր սուրբ ։

— Լա՛ւ , դուն գիտես . բայց մեզ մի մոռնար . երբեմն եկո՛ւ , մեզի լուր բերը , դուրսերը նայինք ինչեր կը խօսին ։

— Շատ աղէկ , բայց ամեն զրուցվածները չը խօսիմ . արամիտ . . .

— Հասկցայ . հասկցայ . մեզի ինչ որ պէտք է նէ անոնք կը խօսիս . . . . ծո՛

Յանկոր. ազգային խուճապները չիտ-
կեցէք։ (Ինքիրեն) Ղզուլեամ ազգ. սատանկ
մարդոց բերնին հոտը մոխիկ ընելու ե-
ղանք հէ՞... բայց հոգ չ'է. թող իմ
գործս առաջ երթայ տէ՝ քիչ մը ատեն..
(Ո-ւրիշ մարդ մը ներս կը մտնէ)։

— Բարև վարդապետ. ինչպէս ը-
րինք. թուղթը բերին. ահ որչափ աշ-
խատեցայ գիտե՞ս. այնչափ ստորագ-
րութիւնը այնչափ քիչ ատենի մէջ ժող-
վելը գիտե՞ս դիւրին բան չ'է։

— Այո՛ բերին. շնորհակալ եմ. բայց
այնչափ ստորագրութիւն ինչպէս ժող-
վեցինք։

— Ա՛հ, էվէլ ալլահ իմ ձեռքէս բան
չը փախչիր. ես մէյմը եալլահ չ'ընեմ
եօխտա... ամեն բան տակն ու վրայ
կ'ընեմ։

— Այս ալ ինչո՞ւ քեզ կը սիրեմ։

— Սիրելի անկէ գիտնամ որ Պատ-
րիարք ըլլաս նէ՝ իս չը մոռնաս։

— Ցէ՛յ ինտի ատանկ խօսք մ'ըներ.
այսչափ տարի է ձեր հետ էի, ինչպէս
կ'ըսէ սուրբ Աւետարանը, ու գեռ չը
ճանչեցինք իս։

Սուտ կ'ըսեմ սուտ վարդապետ. մենք քեզ ամենէն աղէկ կը ճանչենք. մենք գիտենք որ դուն մեզ չ'ես մոռնար։

— Ի հարկէ....

— Ինչ ես կ'երթամ. երթամ ոչ գործ տեսնեմ։

— Ձեզ տեսնեմ.... ահ.. հէլէ ես ալ գնայ։

ՅՈՒԼԻՍ 13.

Սահակ վարդապետը անհամբեր կ'սպասէր որ սենեակին մէջ ընդհանուր կրօնական ժողովէն լուր առնէլու։

— Ահ... ինչո՞ւ այսչափ երկար տևեց. ահ... Տէր իմ Աստուած... այսօր թէ որ դէշ վիճակ մը ման այդ մարդիկը՝ ես իմ փոքրիկս չը պիտի հանիմ։.... (Պապոհանէն փողոցը նայելով) դեռ մարդ չ'երևար. ահ.... ինչ կ'ընեն... ծո՛ Յակոբ... դեռ եկող գնացող չ'եղաւ։

— Նկաւ հայր սուրբ։

— Ո՞վ եկաւ։

— Դուռ-դաբուն Տաճիկ Խաչատը։

— Օ՜ւ ես քեզի ան չ'եմ հարցընէր կոր. տա ժողովքէն մարդ չ'եկաւ ամենևին։

— Ո՛չ, մարդ չ'երևցաւ։

— Տէ՛ գնա լուր մը առ նայինք ի՞նչ են ըսեր... (Պապո-հանէն դուրս նայելով) Յակոբ մ'երթար, եկու, չ'ուզէր, կուգանկոր։

(Սոհակի վարդապետ և Փահանայ մը)։

— Բարով եկար, ի՞նչ ըսիր նայինք, խեր լուր մը բերիր։

— Ամամ գուն ալ ի՞նչ հոգ կ'ընես կոր. ես մէյմը գործին մէջ մտնելէն ետքը ալ քեզի խեր լուր չ'եմ բերեր մի եա։

— Լ՛ոյ ի՞նչ ըսիք նայինք. ինչալլահ լմնցուցիք գործը։

— Ի՞նչ պիտի ընենք. ամենևին ուրուշումը չ'ըրինք ելանք։

— Լ՛ոյ առ չ'եղաւ նէ՝ ....

— Լ՛ոհ գուն չ'իյուես որ ես գործ չը տեսնամ նէ ալ՝ ուրիշին ալ չ'եմ թողուր որ գործ տեսնան. մեք ոչ մը տանեմք, և որոց մտանենն արգելումք։

— Լ՛ոյ առով ի՞նչ կ'ըլլայ։

— Ի՞նչ պիտի ըլլայ. անոնք որոշեր էին, որ դուրսէն ալ ազգեպիսկոպոս մը պատրիարք կրնայ ըլլալ ասէի. մենք ալ վճիռ կ'ուզէին որ դուրսէն կրնայ ըլլալ ասէր. մենք ալ մինակ ներսէն կ'ըլլայ ըսինք կեցանք ու անանկ վճիռ տալ ուզեցինք՝ նայեցան որ մենք շատ դէմ կը կենանք կորնէ՝ էհ ըսին, մեհ ըսին, ստորագրեցէք ըսինք, չ'ստորագրեցէք ըսին ու վերջապէս անանկ մեզ ամենա ալ ցրվեցանք։

— Այս շատ դէշ բան եղաւ. հիմայ անոնք կ'ելլան կ'ստորագրեն ու վճռը վաճ կը ցուցնեն։

— Հը՛. անոնք անկարող են ատանկ խարդախութիւններու. անոնց քերթին չ'է մնկած ատանկ վարպետութիւններ քանեցնել։ Ան արհեստը ամենուն տրված չ'է։

Այ հիմայ ինչ ընենք պիտի. հապա վաղը ատանք ելլան ընդհանուր ժողովին մէջ դուրսէն եպիսկոպոս մը ընտրեն լմնցընեն նէ ինչ ընելու է։

— Այս գիտեմ. պէ տեսար քիչ մ'ալ դուն մտիրտա. պատրիարքը եւ

ելալու չ'եմ մ՝ա. ալլահ. դուն պատրի-
ալք պիտի ելլաս. իմին ինչ հոգս է։

— Պէ՛ տէր հայր, գիտես դուն որ
իմ պատրիարքութիւնս մինակ ինծի
համար չ'է. դուն իմ պատրիարքու-
թիւնս քու շահուդ պէս հոգալու ես։

— Ասկեցանք բայց ինչ կրնամ ը-
նել. ինչ որ ձեռքէս կուգար՝ ահա
ըրի. ասկէ եւեթ ի՞նչ կրնամ ընել։

— Ամա՛ն տէր հայր. ճար մը գտիր.
սատանկ թողելու չի գար։

— Ի՞նչ ճանըմ մէկտեղ մտածենք...

— Ես նայէ՛. վաղը չ'է՞նք կրնար սա
ընդհանուր ժողովը տակնուվրայ ընել։

— Ի՞նչ աղէկ մտածիր. բայց էն
առաջ ես չ'եմ նեռվիր. աշխարհա-
կանները քանի մը հոգի պռռալու են
առաջ՝ դուրսէն չ'ելլար նշովք կայ ըսե-
լէն. անկէ եաքը խօսքը մեզի մնայ նէ՝
Աստուած ողորմած է։

— Հա՛ հա՛ աղէկ կ'ելլայ. ուրեմն
մէկ քանի բարեկամներու խմաց տալու
է։

— Ի՞նչ իշտէ այս իրինկուն անոնց
խմաց տուր. վաղը թող պռռան կան-

չեն. սահա աղէկը կուզեմ. գուն ել սա իրկուն պէշիկթաշ գնա. ես ալ հոս մէկ քանի հոգի կը տեսնեմ կամ այս իրկուն կամ վաղ առաւ՝ գործը կարգի կը դնենք։

— Աղէկ ըսիր ես ահա կերթամ։

— Ինձ մի կենար գնա. պատրիարքը ելլալը դիւրին չէ. աշխատելու է, հոգնելու է, վազելու վազվզելու է. մանաւանդ այս անիծեալ Սահմանադրութեան օրովը։

— Իրաւ է իրաւ. ամէս ինչ ըսեմ ես այն դպրոցներուն, որ մեզի սատանկ ժողովուրդ մը հասուցին. մեռնողին կ'ըսէին որ վանքին մէջ դպրոց հասատ է, դպրոց հասատ է. մարդը եղեր սատնց խօսքը մոխիկ ըներ նէ՝ չէ՞ մի որ այն դպրոցէն ալ այս սահմանադրակա՝ ներուն պէս վարդապետներ դուրս պիտի պուտկային. դպրոց բանալ մի, բոլոր դպրոցները գոցելու է . . . ։

— Տէ վարդապետ է. հիմա սատանկ խօսք մ'ընէր. հիմա դպրոց պիտի բանամ ըսէ տէ՝ եսքը պատրիարքը ելլաս նէ՝ ինչ որ կ'ուզես ան ըրէ։

— Հէ՛, լրա՛ւ ոչէկ ըսէր, արդեօք մարդ ըսեց ասածնե՞ր։

— Չէ՛ մարդ չը ըսեց... ես ըսեցի, ես ալ բահանայ եմ՝ խոստովանութիւնը մարդու չեմ ըսեր։

ՅՈՒԼԻՍ 14

Ինդհանուր ծողովին յուվելին եկաւը։

— Վա՛յ շատ գէշ եղաւ, ես կը կարծէի որ երեսփոխաններուն մեծ մասը կ՚առնեն կը քալեն, ի՞նչ կ՚ըլլայ 15 աղաներ առնել քալելուն, անոնք նատեր ընելիքնին ըսեր լմնցուցեր են։

— Այ ի՞նչ ընենք, այսչափ կրցանք ընել... բայց հոգ մ՚ըներ, այն 15 աղաներ՝ հելլենիզմ մէկ ճար մը կը մտամտան։ Անոնք մնացած երեսփոխաններուն ամենէն ալ եւեր կ՚արժեն, մընացածներ՝ քանիի կ՚առնես, սոր կը ղրուցեն, կը պօռան, կը կանչեն՝ վաղը մէյմէկ դի կը քաշվին, անոնք խաղաղնին բրցընող են... պէ՛ ի՞նչ կը մտածես։ Աստուած ողորմած է, դուն բանդ նայէ, տահա տահա նայինք ինչ՞ ի՞ըլլայ։

— Սման ապա, վերն Աստուած վա-
ը ձեզ ունիմ. ձեզի եմ ապաւիներ.
(կ'սկսի լալ)։

— Պէ ճանիմ հայր սուրբ, ինչու
կուլաս. ահ ոգոյնեա. ապրց ես ինչ
ես. ամեն ապրդ պարդնեմ հայր սուրբ
մի լար. եաթը կ'ելաս կը հիւանդնաս,
եաթը ոմ ունինք մենք։

— Չխ. ինչ լսեմ, ինչ լսեմ. ա-
սման ապա. ճար մը ըսէք։

— Կեցի կեցի. մենք կ'աշխատինք,
որ քուէհամարը մէկ քանի օր եա ձը-
դել տանք. անկէ եաթը քուէտուփը
ամենեւին բանալ չլսալը դիւրին բան
է։ Քանի մը օր ատեն վատրկինք նէ՝
մէկ կողմէն ստորագրութիւն կը ժո-
ղովեր ու դուրսէն պատրիարք ընտրելու
դէմ կը կենանք. ասոր համար
պէտք է որ ժողովուրդը մեր կողմը
վատրկինք։

— Ստորագրութիւն ժողվելու ու
մարդ վատրկելու ճամբայ նէ՝ ես շատ
դարձ կրնամ տեսնել իմ բարեկամնե-
րուս ձեռքով՝ ես ալ ամենեւին չ'երե-
ւալով։

— Ինտրակոյս՝ մենք չըպիտի երեւանք. մեզի խաւարեալ կ՚ըսեն կոր նէ՝ մարիֆէթնիս ինչ է. խաւարի մէջ գործել որ մարդ մեզ չըտեսնէ։

— Հիմայ իշտէ ինչ է նէ, թէ որ առանկ բաներ պէտք ըլլայ նէ՝ իմ ձեռքէս եկածին չափ կ՚աշխատիմ։

— Շատ աղէկ. դուն հոգ մ՚ըներ հայր սուրբ. մենք հէլպէթ բան մը պիտի ընենք։ Բայց նայինք պատրիարքը ըլլաս նէ մեզի ինչեր պիտի ըսէ եւ ըսուսաղէմէն։

— Դուք ալ այդ կողմէն անհոգ եղէք. մէյմը Երուսաղէմ հասնիմ ու անսանեն կը տեսնաք։

— Լա՛հ. ահա սանկ ես կ՚երթամ։

— Երթաք բարով աղա, Տէր ընդ ձեզ... (խնդիրքն) բայց շիտակը պատրիարքը ալ ըլլամ նէ՝ կարծեմ Երուսաղէմը Սատանայ պարպել պէտքը պիտի ըլլայ... բայց ինչ հոգս. ես հօրս տունէն չըբերի ա՛. ես կը պարպեմ, առանակ հայերը նորէն կը բերեն կը լեցընեն։ Մեր վարդապետները երբոր ելնեն ժողովուրդին քարոզ տան, ու

երբեմն «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս ուր ոչ ցեցք ապականեն և ոչ գողք ական հատանեն» ասեն՝ շուտ մը վանքին գանձը կը լենայ . . . Անիծեալ մարդիկ . սա՛ նայէ . վանքին եկեղեցոյն ամբողջ ազգն իմանալու է ասելով՝ ժողովուրդին աչքը պիտի բանան . . . մենք ի՞նչ ենք քաշեր մինչև այսօր գոց պահեր ենք նէ . անոնց աչքը բացվի նէ՝ մենք անկէ ետքը ի՞նչպէս կրնանք մենք խատակրօն ենք , մենք սրբակեաց ենք , մենք ճշմարտասէր ենք և այլն ասել . ոմ կը հաւատայ մեզի . ժողովուրդը մինչև այսօր վարդապետին արտաքնոց երթալն անգամ չգիտեր եղեր . ի՞նչ պէտք է բանալ ժողովուրդին աչքը , որ ասկէ ետքը զգուշութիւն ընէ ու վերցընէ մեր վրայէն իր կոյր վստահութիւնը . . . սա՛ սա՛ սա՛ սա՛ Քաղաքական ժողովին առեղծվածը , կարծես թէ Վարդապետին ճրագա- ՀՆԵՑԻՑ ՂԵՐՈՒԱՂԷՄ խօսքը իրեն համար ասված է՝ Երուսաղէմին ետեւէն ինկեր ու վանքին ապագան Ազգին ցուցնելու կ'աշխատի . խեղճ մեռնող պատրիարքին գլուխն բերած փոր-

ձանքները բաւական չ'եղաւ՝ հիմայ մեր գլխաւն ալ չք լսված չարիք կը մտածէ ու կը թափէ։ Ելաւ 1857 ին ըսաւ թէ Երուսաղէմի պատրիարքը բերել տանք ու հաշիւ պահանջենք. հարցնենք թէ ինչո՞ւ իր խոստացած դպրոցին, հիւանդանոցին և այլն փոխանակ յիմարանոց է շիներ վանքին մէջ. անիրա՜ւ զքեզ. դո՞ւն եղար Երուսաղէմի պատրիարքի մը հաշիւ հարցնող. հէլէ ինչ է նէ՝ ան տեսնն Աստուած միշտ անպակաս ընէ քանի մը ոսկիին լուսովը փայլուն ազգատէր տղաներ պատրիարքին խընդրանօքը դէմ կեցան աշխատեցան վատաբկեցան վերջապէս յաջողեցան . . . Այս անգամ ալ Աստուծով այն աղաները կ'աշխատցընեմ ես ու կ'ըսեմ անոնց մէկտեղ վատակինք, ու Երուսաղէմը սրբոնց ձեռքէն ազատելով անոր փառքը մենք վայելենք։

ՅՈՒԼԻՍ 18

Սահակ վարդապէտ սիրտն անհանգիստ՝ սենեակին մէջ կը շրջի։

— Աստուած օգնական հայր սուրբ։

— Ցաուած պահապան սիրելիս. ինչ ըսիք. ինչալլահ խութին չը բացվեցաւ։

— Ամենեւին. ամենեւին. դուն անհոգ եղիր. մենք ամենեւին բանալ չըպիտի տանք. ինչ. այսօր քուէտուիը բանան՝ վաղն ալ վանքին դանձը. քուէին համարը նային՝ եկած շաբթուալ վանքին եղուամուտքին համարը նային. մենք ատանկ վարժապետներ չենք ընդունիր։ Հէյլէ սրիկէ էնֆիյէ մը քաշէ... ալ Երուսաղէմ երթաս նէ Հալէպէն մեզի էնֆիյէ պիտի զրկես։

— Ինչ ըսել է աղաս. ատոր խօսքը կ'ըլլայ։

— Այ շնորհակալ եմ. հիմայ կարձը զրուցեմ, գործ ունիմ պիտի երթամ. եւ ատոր քուէհամարը ընել չը տուի. բանը ընդհանուր ժողովի պատկեցնել տուի. իրաւ մէկալները չը կրնային, բայց պատրիարքը կրնայ։ Հիմայ ուրբաթ օրը ընդհանուր ժողով կայ. ինչ կ'ընես նէ ըսէ. հէմ շատ մը ատորպրուխթիւն պէտք է հէմ շատ մը մարդիկ իջեցնելու է ան օրը վար։

— Շատ ապէկ ապրա. դուք ան կոզ-
մէն անհոգ եղէք. քանի մը հոգի եղած
է Զարշին սորտադրութիւն ժողվելու՝
հիմայ ուս ուսանող հազար լիրա
կուզայ։

— Թամամ, ըսամամ. ես ալ ուրիշնե-
րու երթամ...։

(Ապէ— այս անոյը դուռս եղած՝ մեկը
շատա— ներս կը մտնէ)։

— Ստուած օգնական հայր սուրբ.
բերի՞ն բերի՞ն թուղթը բերի՞ն։

— Ա՛յ, դեռ չը բերին։

— Ի՛հ, հիմայ կուզայ. շուտ մը
քանի մը հազար սորտադրութիւն ժող-
վեցի, ու թէ որ առնչիս չը բռներ նէ՝
Սամսոնի մէջ մարդ չը պիտի թողէի՝
ամենուն ալ սորտադրութիւնը պիտի
դնէի։

— Շատ ապէկ սիրելիս. օրհնեալ
ըլլաս. Երուսաղէմը դուք պիտի ապա-
սէք։

— Ինչալլահ... բայց շիտակը շատ
հոգնեցայ. առաջուընէ մինչև հիմայ ան-
դին ադին կը վազեմ իմն ժողվելու։
Գործ ալ չ'ունենայի գանէ...։

— Հոգ մ՚ըներ դուն օրհնած. ես օր մը քու հոգնութիւններդ քեզի մոռցընել կուտամ։

— Ողէկ ամա, մինչև ան ատենն ալ...

— Սիրելիս մէկ երկու օրէն ես կը... Ասուած կը վարձատրէ զքեզ։

— Շատ ողէկ. հոգ չ՚է հայր սուրբ, ես քեզի համար տասը օր ալ գործէս մնամ՝ նէ չ՚եմ մոմլուար... ախ պէտք էր որ Ջուրա ո-յպո-ղմիշ ըլլայի ան՝ աս խոսքերը ամենեւին չ՚ընէի, որ ինչ չարի ամօթ բան է։

— Հոգ մ՚ընէր դուն օրհնած. ինչ շալլահ ուզմիշ կ՚ըլլայ։

— Հէլալէթուէ. էհ ես երթամ՝ ան թուղթը ղրկեմ։

(Ընոր դո-ռս ելնելն հինգ վայրկեան էր՝ ոռիշ մեկը ներս կը մտնէ)։

— Հայր սուրբ. թուղթը բերին.

— Ձէ սիրելիս դեռ չ՚եկաւ.

— Լ՚հ հոգ մ՚ընէր. հիմայ կուգայ. ախ ատհա շատ ստորադրութիւն կը ժամկէի ես ա՛. ինչ ըսեմ ան լուսաւորեալներուն. մէկը ինչ առնելիք ունէր՝ շատուց է ալ իս տեսած չ՚ունէր.

տեսնելուն պէս իս բռնել տուաւ, զապթիէն գացինք. մինչև որ ինքզինքս ազատեցի նէ՝ վայն 'ի վրաս եկաւ. ախ հայը սուրբ սատակ ունիս նէ՝ ինծի հինգ հարիւր ղուռուշ փոխ տուր. ֆայէտվը կուզեմ կը հասկնամ ձրի չ'է. սա պարտքս տամ՝ սա լուսաւորեալներուն ձեռքէն ազատիմ. անկէ ետքը տես որ ինչպէս պիտի աշխատիմ. քեզի համար իրաւ որ պէտք ըլլայ նէ՝ արիւնս կը թափեմ։

— Շնորհակալ եմ սիրելիս. ուզածդ բան մը չ'է. բայց այս օրերս քիչ մը նեղութիւն ունիմ. սա նեղութիւնս անցնի՝ անկէ ետքը ուզածդ թող հինգ հարիւր ղուռուշ ըլլայ։

— Ինչո՞ւ նեղութիւն ունիս ճանըմ. Երուսաղէմէն սատակ չիգա՞ր։

— Դեռ չ'եկաւ. բայց յոյս ունիմ որ քիչ օրէն կուգայ։

— Շատ աղէկ մէկ քանի օր ալ կը համբերեմ. ան ինչ առնելիք ունեցողը ան ալ աղէկ մարդ մը՝ն է. ան ալ կը համբերէ։

(Հաղէ՝ այս անիծը դո՛ւրս ելաց՝ ո՛չիչ մը չը մնաց)։

— Այո, հայր սուրբ, թուղթը։

— Ինչպէս ըսիք. քանի հազար սուրբագրութիւն եղաւ։

— Հարիւրով խօսէ հայր սուրբ։

— Ինչ կ'ըսես տէր ողորմեա։

— Հարիւրով հարցու կ'ըսեմ։

— Ո՛անգամ հապա եկան ըսին որ. քանի մը հազար սուրբագրութիւն ժողված են։

— Համրողը ես եմ՝ հարիւր ալ չըկայ. ամենը 84 ու կէս սուրբագրութիւն կայ սա թուղթին վրայ։

— Այդ կէսը ինչ է։

— Բոչա մը գայ անոր ալ սուրբագրել տաս։ բոչան կէս հայ չըսեպ. վիր մի։

— Այ ինչու չ'էին սուրբագրեր կար։

— Այս ի՞նչ գիտնամ իրաւ որ. որու որ տարինք՝ ամենքն ալ մէյմէկ բան ըսին. ուրը ես ներսէն դուրսէն չ'կրնամ իմ երեսախնամս գիտէ, ըսաւ։

— Երեանին եռաւ դառնայ։

— Որը, ես վանքին փարան ուսուցաւ միտք չ'ունիմ որ ներսէն ելլայ տեղի սուրբագրեմ ըսաւ։

— Հմմ, վանքին փարան եւ եկեղցաւ տէ՛ անոնց ալ պիտի տայինք կը կարծեն։

— Որը քանոց թուղթ մը տուր ստորագրեմ ըսաւ։

— Ընխելքներ. ես քանոց թուղթ թող մը քառաւուն ստորագրութիւն կը ժողվեմ։

— Որն ալ հարցուց թէ այս թուղթը ով տուաւ քեզի. ես ալ ձեր անունը տուի որ ձեր խաթրէն չ'անցնին ու անուններին գրեն։ . . .

— Ի՞նչու իմ անունս կուտաք (Բ-ը-հ-ի-ա՞մ)

— Էյ ինչ կ'ըլլայ Տէր ողորմեա՛. հրամանքդ քեզի համար չ'ես աշխատիր կոր ա՛. վանքին համար կ'աշխատիս. բայց մէկ քանի հոգի ձեր անունը լսածնուն պէս գործին ինչ ըլլալը ամենին չը հարցուցին ու ստորագրեցին։

— Ստուած օրհնէ անունք։

— Որն ալ մենք չ'ենք ստորագրեր ըսին. ինչու տէյի հարցուցի նէ՝ թուղնաւոր է անոր թուղթը, ձեռքերնիս առնելու կը վախնանք ըսին։

— Կորի՛ք անզգամներ ասէ անոնց։

— Այ մէկն ալ . . . . . ։

— Լ՜յ, ի՞նչ եղեր է։

— Այ մէկն ալ . . . . . գէշ խօսքեր ընելով իս պատուաւոր կերպով վրէն տեցին։

— Հոգ չ'է հոգ չ'է. առոնց անուն-ները գիտես ա՛. մենք վաղը Ղամուռ-ճեանին կ'ըսենք՝ որ ան ալ անոնք հա-յոց եկեղեցիէն վռնտէ։

— Շատ աղէկ կ'ըլլայ հայը ա՛ռ-ը շատ աղէկ կ'ըլլայ. քանի որ ադ մար-դիկը մեր մէջն են մենք հանգստու-թիւն չ'ունինք. անիծից արմատները իրենք չ'ատրագրելէն զատ ուրիշներուն ալ թաղ չ'են տար որ ատրագրեն. մենք քառասուն խօսք կ'ընենք հազիւ կը հա-մազենք, մէյմ՚ալ անոնք երկու խօսք կ'ը-նեն ու շուտ մը կը դարձընեն. պէ-յի-ճէ- են ինչ են. խելքս չը հասաւ։

— Մենք անոնց կը սրվեցնենք. ինչ է նէ դուն հիմայ առ սա թուղթը. Բէլէտ տակը առ. ու գնա Մեծ Նոր խա-նին վերի դրանը ներսի դին կայնէ. կը նայիս որ անդիէն երկու քարձրահա-

